

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան միջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.  
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հ ա ն գ ու ղ ե ա լ

## ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷԻ

յուզարկաւորութիւնը իր բնակարանից (Երզնկայի փողոց, № 132) տեղի կունենայ  
չաբաթ, նոյեմբերի 18-ին, 3 ժամին կէսօրից յետոյ գէպի Կուկիայի Թանգոյեան ս.  
Աստուածածնի եկեղեցին: Թաղումը տեղի կունենայ կիրակի, նոյեմբերի 19-ին, պա-  
տարադրից յետոյ, որ կը սկսվի առաւօտեան 10 ժամին, վաղը քան թէ ըստ սովորի, որի  
մասին յայտնում են հանդուրժող եղբայրները ազգականներին, բարեկամներին եւ  
ծանօթներին:

## ԵՓԵՄԱՆ ԵԳՐՈՐԴՆԱ ԱՂԱԶԱՆԵԱՆԻ

ժամկան մասին, որ տեղի է ունեցել այս նոյեմբեր ամսի 14-ին, եւ խնդրում են ծանօթ-  
ներին ու բարեկամներին չնորձ բերել կիրակի, նոյեմբերի 19-ին, առաւօտեան 10 ժա-  
մին, հանգուցեալի յուզարկաւորութեանը նրա բնակարանից (Միքայէլեան փողոց, № 60)  
դէպի Կուկիայի ս. Աստուածածնի եկեղեցին, որ գտնվում է Վօրոնցովի արձանի ժող,  
եւ այնտեղից դէպի Վերայի գերեզմանատունը: Հոգեհանգիստ լինելու է չաբաթ օրը,  
երեկոյեան 6½ ժամին:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համալսարանային ցուցահանդէս. — ՆԵՐՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ցաւակցական հեռագրերը.  
Վրաց թատրոն. Նամակ Նոր-Բայազէտից. Ներ-  
քին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-  
մակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒԱ-  
ԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱ-  
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական դէմքեր.

### ՀՄԱՐՇԵԱՐ ՀԱՅԻՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԱՆԵՐ

Հարց է ծագում, թէ արդեօք այնպիսի  
խոշոր ցուցահանդէսները, ինչպէս էր օրի-  
նակ Պարիզի ցուցահանդէսը, ունենալ ար-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

### ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷԻ

Լուսանում է ընկեր...  
Աշխատել սկսել...  
Աշխատանք ստատկացած  
Պահանջում է աշխատ...  
Իշխան Բաղրատունի

### I

Ռուսահայերի պարբերական մամուլի նախա-  
փորձերը շատ սակաւակցեց եւ խղճուկ էին:  
Գրաբար լեզուով հրատարակվող «Կովկասը»  
(1846—1848) ապրեց երկու տարի եւ մի քանի  
ամիս, իսկ նրան յաջորդած տալիսարաբար  
«Արարատը» (1850) մի տարի էլ չը կարողա-  
ցաւ բոլորել: Երկուսն էլ չաբաթաթերթեր էին:  
Այնուհետեւ եկաւ վեց տարվայ ընդմիջում,  
երբ ոչ մի պարբերական հրատարակութիւն չը  
կար: 1857 թվականին Ստեփանոս Նազարեանց  
սկսեց իր «Հիւսիսափայլը» Մոսկվայում: Միա-  
ժամանակ թիֆլիսում ծնվեց «Մեղու» հայաս-  
տանի» չաբաթաթերթը, իսկ նոյն Մոսկվայում  
սկսեց հրատարակվել «Ճառագողը», որ չուտով  
ամսագրի դարձաւ: «Մեղուն» եւ «Ճառագողը»  
երկուստեան հետ Նրանք ծնվել էին մի-  
մեանցից հետո, բայց ապրում էին միասին:  
Նազարեանցին դիմադրելու համար Դիմադրե-  
լու պէտքը մեծ էր. «անվերջ վարդապետ»  
(այսպէս էին թշնամիները անուանում Նազա-  
րեանցին) կործանում էր հայոց ազգը, քարո-  
զելով լոյս, վերանորոգութիւն, առաջադիմու-  
թիւն եւ քաղաքական ոգով եւ Ստեփան քահա-  
նայ Մանգրեանց թիֆլիսից ու տիրացու Ման-  
Մազիսարոս Մոսկվայից պահպանում էին հայոց  
ազգը, թոյլ չէին տալիս, որ նա կործանվի  
նոր գաղափարներով տոգորված երիտասար-  
դութեան ձեռքով:

դեօք շօշափելի օգուտ մասնակցող ազգերի  
համար, թէ նրանք կորցրել են իրանց  
նշանակութիւնը:

Միջազգային խոշոր ցուցահանդէսնե-  
րում ստուգելի մէջ են մտնում փոքր եւ մի-  
ջին կուլտուրային պատկանող ազգերը եւ  
նրանց արած առաջադիմութիւնը չը քա-  
նուած է այն խոշոր եւ ընդարձակ առաջ-  
խաղացութեան դիմաց, որ կատարել են  
բարձր կուլտուրայի ներկայացուցիչ ազգե-  
րը: Պարիզի ցուցահանդէսում աչքի չէին  
ընկնում նոյն իսկ այնպիսի եւրօպական  
կուլտուրական ազգեր, որոնք իրանց գոր-

Պահպանողների բանակը ստուարացաւ: 1860  
թվին Գարբիէլ վարդապետ Այվազովսկի Պա-  
րիզի «Մասեայ Աղանին» տեղափոխեց Թեո-  
դոսիա եւ լայն ապարէզ բաց արեց Նազա-  
րեանցի հակառակորդների համար: Նոյն թվին  
Թիֆլիսում սկսեց հրատարակվել «Կուռնի» հա-  
յոց Աշխարհին» ամսագիրը: Մարկոս Աղաբե-  
գեանցի խմբագրութեամբ Սա արդէն «Հիւ-  
սիսափայլը» կոչը թշնամիներէից չէր, բայց ջերմ  
կուսակից էլ չէր:

Իր ուղղութեամբ, իր դաւանած սկզբունք-  
ներով «Կուռնի» պատկանում էր «Մեղու»  
եւ նրա արքանականների խմբին, բայց ներկա-  
յանում էր պահպանողական կուսակցութեան  
բարեփոխութիւնը: Զովինգովին հասցրած թունդ  
ազգաբարոյթեան հետ նա նայում էր եւ եւրօ-  
պական կեանքին, թէ եւ իր գլխաւոր գործը  
համարում էր «թռչել հայկական երկնքում»:  
Ամսագիրը աշխատում էր հետեւ պահվել բա-  
նակրիւններից, բռնել միջին ճանապարհ, հաճելի  
լինել երկու կողմին էլ: Բայց երբ Նազարեանց  
յայտնեց իր հիմնական մտքերից մէկը, այն՝  
թէ ազգութիւնը միայն եկեղեցու մէջ չը  
պէտք է որոնել, թէ հարազատ հայր եւ  
բողոքականութիւն ու կաթոլիկութիւն դաւա-  
նող հայերն էլ, «Կուռնի» թողեց իր բռնած  
դիրքը եւ վայնասուն բարձրացրեց այդ «ազ-  
գայնործան» մտքի դէմ...

Այսպէս, ուրեմն, «Հիւսիսափայլը» մենակ էր  
չորսի դէմ: Անհաւատար կոխը շատ չը տեսց-  
1862-ին մեռաւ «Ճառագողը», յաջորդ տարին  
«Հիւսիսափայլը» դադարեցրվեց հայ հոգեւո-  
րականութեան ջանքերով, բայց տարվայ վեր-  
ջում նորից լոյս եկաւ այս անգամ միայն մի  
տարի ապրելու համար: 1863-ի վերջում դա-  
դարեց եւ Աղաբեգեանի «Կուռնի»:

Բայց «Կուռնի» դադարում վերջնական չէր:  
1864 թվի յուլիսին Թիֆլիսում լոյս տեսաւ 9  
երեսից բաղկացած մի քոչիւր, որի վերնա-  
գիրն էր. «Յայտարարութիւն Կուռնի» հայ-  
կական Աշխարհի» օրագրի համար: Այդտեղ

ճունեութեան համետ շրջանակում կա-  
տարել են աչքի ընկնող առաջադիմու-  
թիւններ եւ հասցրել են ժողովրդական  
բարօրութիւնը նախանձելի վիճակի: Հաս-  
կանալ է, որ աւելի անպատրաստ ազգեր,  
որոնք միայն սկզբնական քայլեր են ա-  
նում արդիւնաւորութեան մէջ, նրանք  
մնում էին բոլորովին աննկատելի: Այս  
դէպքում ցուցահանդէսը ներկայանում է  
իրեն մի ասպարէզ, ուր բարձր կուլտու-  
րայի ազգերը բոլորովին նսեմացնում են  
միւսներին եւ միութեան գործում հաս-  
տատում են մի գերազանց դիրք իրանց  
համար:

Միւս կողմից միջազգային խոշոր ցուցա-  
հանդէսները հենց այն պատճառով, որ  
շատ են խոշոր եւ ընդարձակ, դառնում են  
անյարմար յաճախորդների համար, որով-  
հետեւ այդպիսի ցուցահանդէսները ու-  
սումնասիրելու համար հարկաւոր են ոչ  
թէ ժամեր եւ օրեր, այլ ամիսներ եւ գու-  
ցէ տարիներ: Եւ չը նայելով այդպիսի  
ցուցահանդէսների անչափ ընդարձակու-  
թեան, նրանց շատ բաժինները մնում են,  
իրեն յատուկ բաժիններ, անկատար: Նոյն  
իսկ Պարիզի ցուցահանդէսում, որ ամենա-  
ընդարձակն է եւ ամենաառողջ միջնա-  
այ-ժամ եղած ցուցահանդէսներից, շատ բա-  
ժիններ անկատար էին կազմակերպված եւ  
մասնագէտ մարդիկ մնում էին դժգոհ ի-  
րանց տեսածից, չը գտնելով այն բոլորը,  
ինչ տուել է արդիւնաւորութիւնը:

Այդ այդպէս է: Խոշոր ցուցահանդէս-  
ները բաւարարութիւն չեն տալիս մաս-  
նագէտին եւ այն անձանց, որոնք նայում են  
ցուցահանդէսի վրա իբրեւ դպրոցի կամ  
կրթական մուգէլի վրա: Բայց նրանք ու-  
նեն մի ուրիշ բարձր յատկութիւն, այդ  
այն է, որ նրանց միջոցով կարելի է դառ-  
նում համեմատել աշխարհի գաղապան ազ-  
գերի արած առաջադիմութիւնը տեխնիկայի

յայտնվում էր, որ ամսագրի հրատարակութիւ-  
նը պիտի շարունակվի: Ո՞վ էր Մարկոս Աղա-  
բեգեանի յաջորդը? — Յայտարարութեան տակ  
գրված էր. «Խմբագրող-Տնօրէնը Կանդիդատ  
Մոսկվայի Համալսարանի, Ուսուցիչ պատմա-  
բանական գիտութիւնների, Ս. Ստեփանէ»:  
Նոր խմբագիրը 24 տարեկան մի երիտա-  
սարդ էր:

### II

Բայց այդ երիտասարդը առաջին անգամ չէր  
իջնում գրական հրապարակ:

1860 թվականից «Հիւսիսափայլը» մէջ աշ-  
խատողների թւում մենք հանդիպում ենք Վ.Ս.  
Ստեփանեանց ուսումնասէր (Ստուդենտ)», «Ստե-  
փանոս Ստեփանեանց», «Էլիսան Բաղրատունի»:  
ստորագրութիւններն: Դրանք պատկանում են  
նոյն անձին, որ Թիֆլիսում երեւան եկաւ իբ-  
րեւ «Կուռնի» խմբագիր: Ստեփանէ ազգանու-  
նով: Ուսանողական նստարանից մայրենի գը-  
րականութեան սիրահար դարձած Ստեփանէ  
գրում էր գլխաւորապէս ոտանաւորներ, որոնց  
տակ դնում էր «Էլիսան Բաղրատունի» կեղծ  
անունը: Իր ոտանաւորներից մի քանիքը նա  
տպագրեց եւ Աղաբեգեանի «Կուռնի» մէջ:

Բանաստեղծի քնար Բաղրատունի-Ստեփա-  
նէին չէր տուած: Բայց նա, այնու ամենայնիւ,  
երգում էր: Երգում էր, որովհետեւ այն ժա-  
մանակ շատ քչերը չէին երգում: Երգում էր,  
որովհետեւ ժամանակն էր երգում: Արշալոյսը  
երգել է տալիս — սա բնական է գիշերվայ ամա-  
յուլի պահանջը, որ արշալոյսի ժամին միայն  
ստիպալները երգեն: Օրվայ կենդանարար լոյսի  
առաջին շողերը ողջունելու համար միանում  
են ամեն տեսակ եւ ամեն աստիճանի ընդու-  
նակութիւններ: Ախորժակին, բնականը հենց  
ձայների այն ժողովը է, որի մէջ կայ թէ սո-  
լակի դալլալիւր, թէ ծախ ձվձվոյր:

Այսպէս են եւ մարդկային կեանքի մէջ լա-  
ւորն յաջորդող արշալոյսերը: Քանի դար էր

մէջ, որ նրանք սթափեցնում են մեծա-  
մտութեան եւ ինքնազոհութեան մասնակա-  
նազգերին, որ նրանք միջոց են տալիս թոյլ  
ազգերին տեսնել այն կատարելագործու-  
թիւնները, որ արել են աւելի առաջա-  
դէմ ազգերը եւ որ, վերջապէս, ազգերի հա-  
մար մի յարմար առիթ է ներկայանում  
ծանօթանալ միմեանց հետ եւ կապեր հաս-  
տատել թէ արդիւնաւորութեան եւ թէ  
աւելի ընդարձակ բարոյական ասպարէզ-  
ներում:

Միջազգային խոշոր ցուցահանդէսների  
կազմակերպութեան դժուար եւ մեծածախս  
լինելը դարձնում է նրանց մի այնպիսի  
ձեռնարկութիւն, որոնք կարող են միայն իրա-  
գործվել Պարիզի նման խոշոր կենտրոնե-  
րում եւ այն էլ երկարատեւ ընդհատումներից  
յետոյ: Այդպիսի ցուցահանդէսները իսկա-  
պէս ներկայացնում են, իբրեւ մեծ տօնա-  
վաճառներ եւ արդիւնաւորութեան տօնա-  
լիցութիւններ:

Իսկ իւրաքանչիւր երկիր սովորական  
դէպքերում պէտք է աշխատել զարգացնել  
եւ աջող կազմակերպել իր տեղական ցու-  
ցահանդէսները, որտեղ կարելի է աւելի  
մանրամասն ուսումնասիրել տեղական ար-  
դիւնաւորութիւնը եւ զբաղվել նրա զար-  
գացման պայմանների լուրջ քննութեամբ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Խորէն եպիսկոպոս Ստեփանէի մահվան ա-  
ռիթով մենք ստացանք հետեւեալ հեռագրե-  
րներ.

Երեւանից. «Երեւանի հայոց թեմական  
դպրոցի ուսուցչական խումբը ողորմ է յան-  
ձին հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփա-  
նէի դպրոցի նախկին տեսչին եւ հայրենի ե-  
կեղեցու ականաւոր հոգեւորականին, որ կա-

հայ ժողովուրդը նստել ասիական խաւարի եւ  
ստրկութեան մէջ: Եւ սակայն նրա համար էլ  
բացվում էր տաք ու պայծառ օր. ազգերի վրա  
ծագած արշալոյսը նրան էլ էր ժպտում: Այդ  
գեղածիծաղ շողերը ամենից առաջ ուսանող  
երիտասարդութեան աչքերին էին խփում — նա  
միայն կարող էր ամենից շուտ եւ ամենից ա-  
ռաջ տեսնել կարմած արեւելքը: Եւ կարող էր  
նա չերգել — Ոչ. երիտասարդութիւնը ողբե-  
րութիւն է, իսկ ողբերութիւնը — երգ...

Հայ ուսանողի երգը դեռ 1849 թվականից \*)  
էր լսվում: Այդ ժամանակ հայերի մէջ դեռ ոչ  
ոք չէր արտասանել նոր խօսքը: Բայց ար-  
շալոյսի հեռաւոր նշողները արդէն տեսնում  
էին զգայուն, մարդաբէ սրտերը: Հայ ուսա-  
նող այդ կանուխ առաւօտին զգաց շարժվե-  
լու, ուրախանալու բուռն անհրաժեշտութիւնը.  
նրան հարկաւոր էին սիրոյ, բաժակի, ծխախո-  
տի, քէֆի երգեր: Հարցնող չը կար թէ ով է  
բանաստեղծը եւ ով բանաստեղծ չէ. եռանդոտ,  
բորբոքվող կեանքը իրանք էր պահանջում եւ  
հայ ուսանողը դարձաւ աշխարհիկ երգերի ա-  
ռաջին հեղինակ: Նա ուրիշ ազգերից փոխ առ-  
նող էր, նրա երգերի ամենամեծ մասը նմա-  
նողութիւն էր եւ շուտ մոտացվեց: Բայց ինչ  
փոքր կար այն նշանաւոր հանգամանքը, որ  
երգի մէջ մայրենի լեզուն էր հնչում. երգը չէր  
կարող սիրել չը տալ այդ լեզուն. եւ հայ ու-  
սանողներից առաջ եկան դրական գործիչներ,  
նոր տիպի, նոր ժամանակի գործիչներ:

Նոր հոսանքի կարապետները մեղանում եր-  
կու հոգի էին — Արտեմանց եւ Նազարեանց:  
Ամբողջովին երգ ու զգացումը էր Արտեմա-  
նցը, բայց երգում էր եւ նրա լուրջ, քննող ու  
մտածող հրապարակախօս ընկերը, Նազարեան-  
ցը: Յիսուսական թվականներին եկաւ հայ ու-  
սանողութեան երկրորդ սերունդը, որ սկսեց  
աշխատել Նազարեանցի հետ եւ Նազարեանցի  
նման: Իսկ վաթսուական թվականների սկզբ-

\*) Տ. Գամառ-Քաթիպալի ձեռագրի Ներդրանք ա-  
ռաջարկել, Պետերբուրգ, 1856:





